Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 13th September 2020 Bulletin 37/2020

Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 6 :14-18

Բայց ես ամե՛նեւին պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհի: Որովհետեւ Քրիստոս Յիսուսով ո՛չ թլփատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ անթլփատութիւնը, հապա՝ նոր արարած ըլլալը: Խաղաղութիւն ու ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին համաձայն կ'ընթանան, եւ Աստուծոյ Իսրայէլին վրայ:

Ասկէ ետք ո՛չ մէկը թող անհանգստացնէ զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տէր Յիսուսի վէրքին սպիները:

Եղբայրնե՛ր, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

The Epistle of St Paul to the Galatians 6:14-18;

But may it never be that I would boast, except in the cross of our Lord Jesus Christ, through which the world has been crucified to me, and I to the world. For neither is circumcision anything, nor uncircumcision, but a new creation. And those who will walk by this rule, peace and mercy be upon them, and upon the Israel of God.

From now on let no one cause trouble for me, for I bear on my body the brand-marks of Jesus.

The grace of our Lord Jesus Christ be with your spirit, brethren. Amen.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3:13-21

Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է: Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

Christ the Light and Life of Men

Որովհետեւ Աստուած ա՛յնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը: **17**Քանի որ Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով: Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ա՛ն որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծմով»:

The Holy Gospel of Jesus Christ according to John 3:13-21

"No one has ascended into heaven, but He who descended from heaven: the Son of Man. "As Moses lifted up the serpent in the wilderness, even so must the Son of Man be lifted up; so that whoever believes will in Him have eternal life.

"For God so loved the world, that He gave His only begotten Son, that whoever believes in Him shall not perish, but have eternal life. "For God did not send the Son into the world to judge the world, but that the world might be saved through Him. "He who believes in Him is not judged; he who does not believe has been judged already, because he has not believed in the name of the only begotten Son of God. "This is the judgment, that the Light has come into the world, and men loved the darkness rather than the Light, for their deeds were evil. "For everyone who does evil hates the Light, and does not come to the Light for fear that his deeds will be exposed. "But he who practices the truth comes to the Light, so that his deeds may be manifested as having been wrought in God."

Խաչվերաց

Խաչվերացը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարևորն է, որովհետև նվիրված է գերությունից խաչի վերադարձի և փառաբանության հիշատակին: Հայաստանյայց Եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը:Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի և Գողգոթայում կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

614թ. Պարսկաստանի Խոսրով թագավորը հարձակվում է Երուսաղեմի վրա, ավերում այն, սրի քաշում ժողովրդին, մեծ թվով գերիներ տանում: Որպես անարգանք քրիստոնյաներին՝ Սուրբ Հարության տաճարից գերեւարվում և Պարսկաստան է տարվում նաև Տիրոջ խաչափայտը: Պարսկաստանում խաչափայտի զորությամբ շատերը դարձի են գալիս, մկրտվում և դառնում քրիստոնյա: Խաչափայտը գերության մեջ է մնում 14 տարի: 628 թ. Բյուզանդիայի Հերակլ կայսրը քրիստոնեական մի հսկա բանակով հարձակվում է պարսիկների վրա, ազատագրում Ս. Խաչը և այն վերադարձնում նախկին վայրը: Որպես պատմական վկայություն՝ նշենք, որ հայ ժողովուրդն անմասն չէ խաչի ազատագրման գործից: Կայսրին ռազմական օժանդակություն է ցույց տվել նաև հունական մասի հայոց զորքը՝ Մժեժ Գնունու գլխավորությամբ:

Խաչը հանդիսավոր թափորով տարվում է Երուսաղեմ՝ Փոքր Ասիայի վրայով, ու բնական էր, որ այն անցնելու էր պատմական Հայաստանով: Թափորն անցնում է Կարին (Էրզրում) քաղաքով, իսկ Կարնո լեռների ստորոտներից մեկում, ուր խաչի դրված տեղից վճիտ աղբյուր է բխում, կառուցվում է Խաչավանքի եկեղեցին: Կայսրը խաչափայտը սրբությամբ երեք տարի Կ.Պոլսում պահելուց հետո անձամբ, կառքի մեջ ծնկած, այն ձեռքերում բռնած, Երուսաղեմ է տանում և իր ուսի վրա դրած:

Գողգոթայի գագաթը հանելով՝ բարձրացնում է Սուրբ Հարության վերանորոգված տաճարում՝ ի տես բոլոր քրիստոնյաների: Այդ ժամանակից էլ վերջնականորեն հաստատվեց և սկսվեց մեծ հանդիսավորությամբ տոնվել խաչի բարձրացման հիշատակը՝ Խաչվերացը:

Խաչը, ինչպես հայտնի է, հնում եղել է չարչարանքի գործիք: Երբ Հիսուս խաչվեց՝ այդ նույն խաչափայտը դադարեց չարչարանքի գործիք լինելուց: Խաչը դարձավ փրկության միջոց, Քրիստոսի սիրո արտահայտությունը, քանզի սիրել՝ նշանակում է նաև զոհաբերություն, զրկանք հանձն առնել: Սերը միայն զգացում չէ, սերը կյանք է և գործ: Եվ Քրիստոսի խաչելությունը հենց այդ սիրո արտահայտությունն է: Խաչն այսօր մեզ համար դարձել է փրկության միջոց, հարության խորհուրդ, պահպանիչ զորություն, քավության զոհասեղան, բժկության աղբյուր:

Խաչվերացի տոնը մեզ համար նախևառաջ հարությամբ նորոգվելու խորհուրդն ունի: Պատահական չէր, որ 3 խաչերը (մեկը՝ Քրիստոսի, 2-ը՝ ավազակների) մահացած մարդկանց վրա դնելով հայտնաբերեցին Փրկչի խաչափայտը, քանի որ մահվան այդ գործիքը Քրիստոսի Սուրբ Արյունով ստացավ նորոգելու, բժշկելու և հարություն տալու զորություն: Քրիստոս խաչի վրա մեռնելով հաղթեց մարդկությանը սարսափեցնող մահվանը և ջախջախեց սատանայի գլուխը:

Ըստ Գրիգոր Տաթևացու, Խաչը դարձավ երկնքի և երկրի միջև եղած վիհը միացնող կամուրջը,<<դրախտի դռները բացողն ու երկնային արքայությունը որպես ժառանգություն տվողը>>: Խաչի վեր բարձրացումով սարսափահար եղավ սատանան: Խաչի բարձրացումով մեկ անգամ ևս հաստատվեց Քրիստոսի հաղթանակն ընդդեմ մահվան, դժոխքի և բոլոր նրանց, ովքեր անարգում ու չեն պատվում Տիրոջ խաչը:

Ժողովուրդը Խաչվերացին կատարում է անթիվ ուխտագնացություններ: Որոշ բնակավայրերում մարդիկ իրենց ձեռքերով խաչեր են պատրաստում և զարդարում գույնզգույն ծաղիկներով, հատկապես ռեհանով: Ժողովուրդը ռեհանն է համարում խաչի ծաղիկ: Ընդհանուր առմամբ՝ Խաչվերացը կամ <<Սրբբխեչը>> աշնան սկիզբը խորհրդանշող ուրախ տոն է: Տոնի նախօրեին՝ շաբաթ օրը կանայք խմորեղեն են պատրաստում, տղամարդիկ՝ ուլ մորթում ու գորովի պատրաստում: Ժողովրդական ավանդության համաձայն, ուլի միսը և ձավարով փլավն այդ օրվա առանձնահատուկ ուտելիքն է, առանց որի տոնը լիարժեք չի կարող լինել:

Շատ տեղեր Խաչվերացը՝<<Սրբբխեչը>> ընկալում են որպես աշնանամուտ: Ինչպես ասում էին քեսապցիները՝ <<Խաչ, վերմակը առ, ներս փախիր>>,- այսինքն՝ բացօթյա գիշերողներն այլևս տանն են գիշերում:

Խաչվերացի հաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Ս. Պատարագ, կատարվումէ հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին:

Feast of Exaltation of the Holy Cross

Feast of the Exaltation of the Holy Cross is the last one of the five major feasts of the Armenian Apostolic Church. It is the most important feast among the feasts dedicated to the Holy Cross, as it is dedicated to the history of the return of the Holy Cross from imprisonment, its elevation and glorification. In the Armenian Apostolic Church the Feast of the Exaltation of the Holy Cross is celebrated on Sunday during the period between September 11-17. This year that date is September 17, and the Monday following the Feast is a Memorial Day.

In 610 A. D, the Persian King Khosrov with a large army attacks the Byzantine Empire. Enthusiastic about the initial victory, in 614 A. D. the Persian army enters Jerusalem. Many people are killed and many are imprisoned. Pontiff Zakaria, the Patriarch of Jerusalem is imprisoned, too. However, the Persians are not satisfied and enter the Church of Holy Sepulcher and take the Holy Cross kept in the Church. The Holy Cross had been found and installed in the Church for the Christians to worship by Heghineh, the mother of the King Costandianos, in the beginning of the 4th century.

In 628 A. D., the Byzantine army led by the King Herakles fight against the Persians to return the Holy Cross. The Armenian army regiment, led by Mzhezh Gnounie, supported the Persian army. With the Lord’s help the Byzantine army wins the battle.

The Holy Cross is solemnly brought to the Armenian town Karin, from where it is carried to Constantinople, and then - to Jerusalem. On the way the Holy Cross was raised for the people to see and worship.

For Christians the Cross is God’s power and strength and pride of all prides, on which Christ’s innocent blood was shed. By means of the Cross Jesus proved His love towards mankind, and the Cross became for us the symbol of hope, love and saving.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ԽԱՉԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

Սիրելի քրիստոսասէր եղբայրներ եւ քոյրեր,

Ամէն քրիստոնեայ մկրտուելուց յետոյ օրհնուած խաչ է կախում իր պարանոցին՝ իբրեւ Քրիստոսով փրկուելու, Փրկչին հետեւելու, Տիրոջ պատուիրաններով ապրելու վկայութիւն: Ամէն քրիստոնեա խաչակիր է՝ փրկութեան նշանը պարանոցին ունենալուց աւելի սրտում պահելով: Պօղոս առաքեալի պէս ամէն քրիստոնեայ կրկնում է. ***«Քաւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով....»*** (Գաղ.6:14): Փրկչի չարչարանքը, խաչելութիւնն ու մահը միջոց եղան, որ մենք նոր աչքերով նայենք անգամ չարչարանքին ու մահին: Մահապատժի գործիքն այլեւս փրկութեան նշան եղաւ: Աւետարանում հրեշտակներն են գործածում «Խաչեալ Յիսուս» բառերը: Երբ իւղաբեր կանայք կիրակի առաւօտեան արեւածագին եկան գերեզման՝ Յիսուսի մարմինը օծելու, տեսան հրեշտակին, որ ասաց. «***Մի՛ երկնչիք դուք. գիտեմ զի զՅիսուս խաչեալն խնդրէք. չէ աստ, քանզի յարեաւ՝ որպէս ասացն»*** (***«Դուք մի՛ վախեցէք, գիտեմ, որ փնտրում էք խաչուած Յիսուսին, այստեղ չէ, քանզի յարութիւն առաւ, ինչպես ասել էր»*** (Մատթ.28:5): Բոլոր խաչեալների մէջ այս տարբերուող Խաչեալով խաչի խորհուրդն էլ փոխուեց: Այլեւս մահը սարսափելի չեղաւ, քանի որ խաչի մահը Քրիստոս «փառաւորում» կոչեց: Սրա մասին է, որ Խրիմեան Հայրիկ հայրապետը զարմանքով պիտի հարցնի. ***«Տե՛ր, ի՞նչ է այս Քո օտար ու նորանշան գործը: Մարդիկ Խաչից խոյս են տալիս, Դու դէպի այն ընթացար: Մարդիկ Խաչի մահն անարգանք են համարում, բայց Դո՛ւ, փառա՛ց Տէր, Խաչը Քեզ փառք համարեցիր»***:

1-ին դարից իսկ սկսած՝ փոխուեց վերաբերմունքը խաչի նկատմամբ: Սուրբ Պօղոսն ասում է, որ Քրիստոս իրեն ուղարկեց աւետարանելու ***«որպէսզի Քրիստոսի խաչը ընդունայն չլինի. որովհետեւ կորստեան մատնուածների համար խաչի քարոզութիւնը յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս համար՝ Աստծու զօրութիւն»*** (Ա. Կորնթ. 1:18): Աստծոյ զօրութիւն խաչը պատուելով է, որ Կոստանդիանոս Մեծը վերացրեց խաչով մահապատիժը՝ իբրեւ խոնարհում Քրիստոսի փրկարար խաչի: Ամենուր քրիստոնէութեան դրոշմը արտայայտուեց խաչի նշանով՝ քանդակուելով կամ նկարուելով պատերին, զգեստներին: Ազաթանգեղոս պատմիչը մեզ է աւանդել Հռոմի կայսեր նամակը՝ ուղղուած Հայոց Տրդատ արքային, ուր քրիստոնեաների համար գրուած է. «..***մի ոմն Խաչեալ Մեռեալի են պաշտում, Փայտին երկրպագում, սպանուածների ոսկորները յարգում, եւ յանուն իրենց Աստծոյ սիրուն մահը փառք ու պատիւ են համարում***»:

Խաչը մահուան եւ սատանայի դէմ Քրիստոսի յաղթանակի ճակատամարտը եղաւ: Ինչով, որ վախեցնում էին, նոյնով Տէր յաղթեց մեծագոյն վախեցնողին՝ մարդկանց մահուան երկիւղով գերողին: Քրիստոնեաների համար էլ փառաւորում է յանուն Աստծոյ մահը, որ քայլել է Քրիստոսի հետքերով դէպի յարութիւն: Իւրատեսակ խաչելութիւն եւ փառաւորման ճանապարհ է ոչ միայն Աստծոյ համար նահատակութիւնը, այլեւ մեղքի փորձութեանը կամ հիւանդութեանը դիմանալը, անհավատների ու քրիստոսամերժ մարդկանց մէջ իբրեւ քրիստոնեայ ապրելու դժուարութիւնը սիրով տանելը: Սրա համար է, որ պատուաբեր է խաչակրութիւնը, Քրիստոսին հետեւելու պայման է՝ ըստ Տիրոջ խօսքի. ***«Եթէ մէկը կամենում է հետեւել ինձ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ իմ յետեւից. որովհետեւ ով կամենայ իր անձը փրկել, այն կկորցնի. եւ ով Ինձ համար իր անձը կորցնի, կգտնի այն»*** (Մատթ. 14:26-28): Տէրը հարց է տալիս՝ մարդ իր անձի համար ի՞նչ փրկանք պիտի տայ: Քրիստոնեաներիս համար Յիսուս Քրիստոսի Խաչն ու Արիւնն են փրկանքը, փրկագինը: Սուրբ Շնորհալի հայրապետը այս է քարոզում՝ ասելով. ***«Սա՛ է յաղթութեան զէնքը՝ սրուած Քրիստոսի արեամբ, սա՛ է Տէրունական աթոռը, որի վրայ բազմեց Քրիստոս՝ Աստծոյ Որդին, սա՛ է Սեղանը Սրբութեան, որի վրա պատարագուեց Քրիստոս՝ Աստծոյ Գառը...»:***

Սիրելինե՛ր, մենք մեր հայրերի նաեւ հավատքի ծնունդներն ու ժառանգներն ենք: Խաչվերացի տօնը իւրատեսակ ուղերձ է մեզ՝ քայլել Խաչի ուխտով եւ հաւատալ, որ կեանքի յարութեան պիտի արժանանան նրանք, որ հաւատարիմ եղան Խաչեալին, Ում փառք Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս. ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Armenian Community Emergency Management Committee (ACEMC)

AID LEBANON APPEAL

Dear friends,

The world was shocked and saddened by the horrific explosion that struck Beirut on August 4. This disaster has severely impacted the Lebanese-Armenian community with many casualties and injuries, and with a devastating impact on both community, cultural, educational and religious institutions, as well as Armenian homes and businesses.

The Armenian Community of the United Kingdom extends its deepest condolences to the families of the victims and wishes those injured and impacted a fast recovery.

The UK Armenian Community Emergency Management Committee (ACEMC), with representation from many institutions and organizations from the UK Armenian Community, is now undertaking a coordinated fundraising effort to provide aid to the Lebanon Armenian Community from their friends in the UK. We encourage and urge you to support this critical undertaking and give generously.

All donations will be transferred to a centralized body under the auspices of His Holiness Aram I which is composed of all the leading religious, political and philanthropic organizations of the Lebanese-Armenian community. The funds collected will be used to provide daily necessities, food, shelter and medical attention to the thousands in need.

Please find the link where to send your donation on line or you can send to dedicated bank account details below:

https://www.gofundme.com/f/acemc-aid-lebanon

Or

Armenian Community Council
40-06-19
41606786

The need is great and every pound is highly appreciated.

Thank you for your kind support

Remember: Face coverings are now mandatory in church (except for children under 11 and those unable to wear a mask for reasons detailed in government guidance) and we need to observe one - metre social distance from those not in our own social 'bubble'. If you forget to bring a mask, simply speak to a Parish Council Member.
Thank you.
St Yeghiche Armenian Church Parish Council

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no memorial service today

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Monday ՄԵՌԵԼՈՑ
On 14th September 2020 from 12:00 noon till 1:30 pm Rev Fr Nshan Alaverdyan will be at Gunnersbury Cemetery for Payers and Blessing of the Graves.

In addition anyone who wants to include the names of their loved ones in the Hokehankist Prayers list, which will be on following Sunday 20th September 2020, please contact the Parish office on 02073738133 or Email us at info@styeghiche.org.uk latest by 6pm Thursday 17th September 2020.

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.